

Արմեն Հ. Ղարաբյոզյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

### ՏՈՐՔ ԱՆԳԵՂԵԱՅ. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ\*

Հայ առասպելաբանության ուշագրավ կերպարներից մեկի՝ **Տորք Անգեղի** մասին գիտական գրականության մեջ արտահայտվել են բազմաթիվ տեսակետներ՝ հաճախ հակասական և իրարամերժ:

Ըստ հայոց ավանդական պատմության՝ Վաղարշակ թագավորը «...գայր խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց, ի գաւակէ Պասքամայ, ի Հայկայ թռռնէ, Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահաղիմութեանն ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արևմտից. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն...»<sup>1</sup>: Առասպելական այս հերոսի մասին հին երգերում այլաբանորեն ասվում է, թե նա «...բունն հարկանել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեղութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իրովք արծուիս և այլս այսպիսիս: Եւ յեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի խաղալն նոցա ի խորն իբրև ի սաստիկ պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնա»<sup>2</sup>:

Բերված տվյալներից երևում է, որ նրանց մեջ «... արտացոլված է նախնական ժամանակներում Հայաստանում **Տորքի** պաշտամունքի մասին եղած ավանդագրույցը»<sup>3</sup>: Բնականաբար «... Տորք-ի Անգեղեայ մականվան՝ Խորենացու կողմից տրված մեկնաբանությունը որպես ան-գեղ (= տգեղ) պետք է համարել ժողովրդական ստուգաբանություն. ավելի հավանական է դրա կապը Անգեղտուն

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 18. 02. 2012:

1 **Սովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 114:

2 Նույն տեղում, էջ 115:

3 **Վ.Վարդանյան**, Բագրատունի տոհմի ծագմանը և գործառույթներին առնչվող մի քանի հարցերի շուրջ, «ՊԲՀ», 2008, N 1, էջ 251:

գավառի և նախարարական տոհմի անվան հետ»<sup>4</sup>: Այս ուղղությամբ կատարված նախնական գիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **Անգեղեայ** անունն իր կազմությամբ չէր կարող նշանակել **տգեղ**, որովհետև կազմված է սեռականի կամ անականի **եայ=եան** մասնիկով և մատնանշում է ծագում, իսկ **Անգեղեայ** կոչումը ցույց է տալիս, որ **Տորքը** եղել է **Անգեղի սերունդ** կամ **Անգեղի տուրք**<sup>5</sup>: Կարծիք կա նաև, որ նույնիսկ **Տորքի** փոխարեն **Տուրք** տարբերակը ճիշտ համարելով, նրանք իրապես չեն նույնանում, որովհետև **Տուրքի** նախաքրիստոնեական նախատիպը հանդիպում է **Տուրգու** ձևով: **Տորք** ուղղագրությունն իր հերթին հաստատվել է Եվսեբիոսի քրոնիկոնում հիշվող **Տորք-նու** անունով: Հետևաբար եզրակացվել է, որ միտանի-խեթական **Տրգ, Տարքու, Տարխու** կամ **Տուրգու** աստծո անունը հայերի մեջ պահպանվել է **Տորք** և **Տուրք** ձևերով կամ ըստ քրիստոնյա գրիչների ըմբռնման՝ գրվել է Տուրք<sup>6</sup>:

Հայտնի է, որ **Տորք** անունն առաջացած է համարվում փոքրասիական Tarku, Tarku աստծու անունից և ծագում է tarh (= տարխ) **կարողանալ, հաղթել** հեթիթական արմատից, որն առկա է tarhuilis **դյուցազնական, tarhuflaiar ուժ, զորություն** բառերում<sup>7</sup>: Նշված իմաստային տարբերակները թույլ են տալիս **Տորքին** բնութագրել որպես **ամենակարող, ուժ և զորություն** ունեցող, մշտապես **հաղթող դյուցազն՝ աստված**: Ընդունված է **Տորքին** համարել խեթական Tarku աստծու հայկական տարբերակը<sup>8</sup>: Ենթադրվում է, որ այդ աստվածությունը փոխանցվել է հայերին լուվիացիների միջոցով<sup>9</sup>:

Ապացուցված կարելի է համարել, որ Tarku (= Տորք) դիցանունից ծագում է

4 **Գ.Բ.Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 411: Ըստ Ս.Սալխաթյանի Անգեղը «խորենացին անհաջող ստուգաբանում է, իբրև անգեղեցիկ, տգեղ, որ խորք է մեր լեզվին: Անգեղը հատուկ անուն է»: Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 345, ծան. 127: Ի դեպ՝ հետազոտողներից միայն Ս. Էմինն է, որ ընդունում է Տորքի Անգեղեայ մականվան խորենացիական մեկնաբանությունը: Տե՛ս История Армении Моисея Хоренского, пер. с армян. и объясн. М.Эмина, М., 1858, с.286,прим. 167%:

Հակագիտական է թուրք եթնիկական անվան հետ Տորք (Տուրք) անվան աղերսակցության մասին տեսակետը, որովհետև «...արտաքին մնամությունն է ավելի գործ տեսնողը քան թե լեզվաբանությունը»: Տե՛ս Աստ.Խաչատրյան, «Տորք Անգեղեայ» հայ հին մատենագրության և նոր բանասիրության մեջ, Տեղեկագիր ՀՄՍՀ գիտության և արվեստի, N 5, Եր., 1931, էջ 45: Հարկ է նշել, որ Տորք Անգեղի մասին ավանդությունը տարածված է եղել նաև մահմեդական աշխարհում: XVI դ. առաջին կեսի թուրք պատմիչ Շերեֆ-եդ-դին Բիբլիսիի «Շերեֆ նամե»-ում տեղ է գտել մի գրույց, որը համարվում է Տորք Անգեղի առասպելի վերապրուկը: Սակայն պատմիչը Տորք (Տուրք) անունը զուգորդել է թուրքին, որովհետև մահմեդականների շրջանում նման կերպ են ընկալել այդ առասպելը: Տե՛ս **Հ.Ս.Բարթիկյան**, Տորք (Տուրք) Անգեղի վերապրուկները «Շերեֆ նամե»-ում, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ.1, Եր., 2002, էջ 111-119:

5 Տե՛ս **Ս.Աբեդյան**, Երկեր, հ.Ա, Եր., էջ 57: Միանգամայն անհիմն է Հ.Սանտալճյանի կողմից Անգեղ տան նախարարությանը ասորական ծագում վերագրելը, որովհետև «Հայ ավանդության մեջ սրա նշմարն անգամ չկա, իսկ Սանտալճյանն էլ որևէ ապացույց չի տալիս»: Տե՛ս **Աստ. Խաչատրյան**, նշվ.աշխ., էջ 57:

6 Տե՛ս **Աստ. Խաչատրյան**, նշվ.աշխ., էջ 42: Ըստ Կրեյմերի Տարքուն կամ Տորքը խեթերի Իշխարա դիցուիու որդին էր, որը պաշտվել է նախ Միտանիում, ապա Արմենիայում և ուրիշ երկրներում: Տե՛ս Աստ. Խաչատրյան, նշվ.աշխ., էջ 43: Գ.Ա.Ղափանցյանը գտնում է, որ «... Անգեղ տան Տորք աստվածը, որ հարավ-արևմուտքից (Կիլիկիայից և այլն) է մտել հայերի մոտ, սկզբում Մ.խորենացու հին ձեռագրերում պիտի լիներ Տարք, որ աղավաղվել է Տուրք ձևի, պահված մի քանի ձեռագրերում, իսկ հետո փոխած Տորք նոր ձևի, թեպետ Troko ձևն ևս կար փոքրասիական որոշ լեզուներում»: Տե՛ս **Գ.Ա.Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն, Հին շրջան, Եր., 1961, էջ 120, ծան. 1:

7 Տե՛ս **Աստ. Խաչատրյան**, նշվ.աշխ., էջ 61, ծք., I. Fridrich, Hethitische wörterbuch, Heidelberg, 1952, էջ 213, **Т. Гамкрелидзе**, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб, 1984, с. 794, 822.

8 Տե՛ս **Ն.Աղոնց**, Տորք աստուծո հին հայոց, Յուշարձան, Վիեննա, 1911, էջ 393, Աստ. Խաչատրյան, նշվ.աշխ., էջ 42, **Վ.Վարդանյան**, նշվ.աշխ., էջ 252:

9 Տե՛ս **Г. Капанян**, Хайаса – колыбель армян, Историко – лингвистические работы, Т. I, Е., 1956, с. 202:Այդ աստվածության պաշտամունքը համարվում է հին հայկական Հայասա-Ազգի պետական կազմավորման կրոնական հավատալիքների շարունակությունը: Տե՛ս **Վ.Վարդանյան**, նշվ.աշխ., էջ 253:

փոշուգերեն **trqq աստված** բառը<sup>10</sup>: Ուրեմն՝ **Տորք** անունն ըստ էության գիտակցվել է որպես **աստված**:

Հիշատակելի է նաև, որ բիայնական Turani դիցանունը կապվում է հայ. տուր-ք «նվեր, պարգև» բառի հիմքի հետ, իսկ -an(i) մասնիկի միջոցով արտահայտվում է գործող անձի իմաստը<sup>11</sup>, ուստի «Turani – հայ. տուր(ք) (հնդ-եվրոպական do - ro), տուրան - «տիրող, պարգևող, բաշխող, շնորհող» իմաստն ունի<sup>12</sup>: Ի դեպ, **Տորք** և Turani դիցանունները նույնացվել են<sup>13</sup>:

Առաջարկվել է նաև **Տորք Անգեղը** հասկանալ որպես **Տորք Օձային**, որը կարող է ընկալվել որպես կերպարի ձևափոխության տեսակ ու մականուն՝ **Օձին** (տարբերակ՝ **վիշապին**) **հաղթող** կամ **վիշապազուհե**: Վերը նշված հետազոտողը չի բացառում այլ կերպարանափոխություններ փնտրելու հնարավորությունը: Նա **Տորք Անգեղի** առասպելում, դև Թալալոսի մասին ժողովրդական հավատալիքներում և կրեառային ասքերում տեսնում է տարբեր ժամանակների առասպելաբանական ձևերի հետաքրքիր համադրություն: Ուստի եղած տվյալները հիմք են տվել նրան եզրակացնելու, որ **Տորք – Թալալոսի** (Թալոսի) մասին առասպելը վերաբերում է հնդ-եվրոպական ընդհանրության ժամանակաշրջանին և տարածված է եղել Արևելյան Անատոլիայի, Հարավային Կովկասի և Հյուսիսային Միջագետքի, իսկ ավելի ուշ նաև՝ Էգեյան տարածաշրջաններում<sup>14</sup>:

Սակայն բերված փաստերը ակնհայտորեն անբավարար են այս կարծիքը հիմնավորելու համար:

Խնդրի առնչությամբ հարկ է նշել, որ **Անգեղ** բերդանվան ներկայիս **Էգիլ** ձևը բխեցվում է ասորերենից<sup>15</sup>: Ավելին, պահպանված **Ագիլ** կամ **Էգիլ** անվանաձևը համարվել է նախնական<sup>16</sup>: Անգեղտունը ստուգաբանվում է նաև որպես **բերդատուն**՝ angI «բերդ» բառից<sup>17</sup>:

Ըստ մեկ այլ քննության՝ Angel անունը **բերդ, ամրոց** իմաստով հնչել է agel կամ egil՝ ինչպես ասորերենում, իսկ նույն նշանակությամբ աքքադերեն և ecal բառը, որը հնչել է ekhal, համապատասխանում է agel - egil-ին և ծագում է շումերերեն egal - ից<sup>18</sup>:

Այս եզրակացությունը հիմք է ծառայել հիմնավորելու, որ **Անգղ** տեղանունը ծագում է շումերերեն E.Gal- ից և փոխանցվել է հայերին սեմական աշխարհից: Հայերենը, ինչպես հունարենը, ունեցել է gg-երը ոգ արտասանելու օրինաչափություն, որի հետևանքով Agel-ը կամ Aggel-ը արտասանվել է Angel<sup>19</sup>:

Հնարավոր է համարվում, որ «Aggel-ը կարող էր նաև հելլենիզմի դարաշրջանում հունարենի գրչական հիմքի վրա ձեռք բերել Angel արտասանությունը և ընդհանրական դառնալ հայերի համար»<sup>20</sup>:

10 Տե՛ս **Գ.Ա.Ղափանցյան**, նշվ.աշխ., էջ 145:

11 Տե՛ս **Գ.Բ.Ջահուկյան**, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, ՊԲՀ, 1986, N 1, էջ 53:

12 **Բ.Ն.Առաքելյան, Գ.Բ.Ջահուկյան**, Գ.Խ.Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Եր., 1988, էջ 151:

13 Տե՛ս Ծ. **Петросян**, Боги и ритуалы древней Армении, Е., 2004, с. 90.

14 Տե՛ս նույն տեղում, с.98-99, 102.

15 Տե՛ս **Յ.Յյուրբշման**, Հին հայոց տեղոյ անուններ, Վիեննա, 1907, էջ 157:

16 Տե՛ս **Բ.Յ.Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 2001, էջ 158-159:

17 Տե՛ս **Գ.Ա.Ղափանցյան**, նշվ.աշխ., էջ 39:

18 Տե՛ս **Г.Капанян**, Историко – лингвистическое значение топонимики древней Армении, Е., 1940, с. 82-84.

19 Տե՛ս նույն տեղում:

20 **Բ.Յ.Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 159:

Նկատելի է, որ առաջարկված ստուգաբանություններն ունեն որոշակի հիմք. **Անգեղ** եղել է բերդ, ուստի հավանական է, որ նրա անունը կերտված է սեմական աշխարհից ավանդված և **բերդ, ամրոց** իմաստն արտահայտող շումերերեն E.Gal-ից, մանավանդ որ ասվածը հիմնավորվում է լեզվական առումով:

Սակայն հարցն այդ տեսանկյունից դիտարկելու դեպքում պետք է ընդունել նաև, որ **Անգեղ** անվամբ Աստված գոյություն չի ունեցել: **Տորք Անգեղեայ** նշանակել է **Անգեղ բերդի Տորք**, իսկ Ներգալի հետ զուգադրումը հիմնված է բերդի **Անգեղ** անունը տեղում պաշտվող **Տորք** աստծո անվան հետ փոխարինվելով, որին նպաստել է հնչակցությունը:<sup>21</sup> Սակայն ակներև է, որ **Անգեղ** անվամբ եղել է աստված: Ըստ Անանուն պատմիչի՝ «Ե որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իրեանց ի կողմանս արեւմտից, այսինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»<sup>22</sup>:

Այսուհանդերձ, դեռևս անբացատրելի է Տորքի **Անգեղեայ** մականվան կապը «մի կողմից Անգեղ դիցանվան հետ, որով Աստվածաշնչում թարգմանվել է Nergal (հուն. Εργαλ) աստծո անունը, և մյուս կողմից՝ Անգեղ անձնանվան հետ, որ Հայկի սերնդին պատկանող Փառնավազի որդու՝ Բագարատի երկրորդ անունն է»<sup>23</sup>:

Հայտնի է, որ հայոց հավատալիքներում **անգղին** («Թռչուն մեծ՝ գազանային՝ կորակտուց՝ շաղղակեր...») <sup>24</sup> վերագրվել է երկարակեցություն, իմաստություն, գանձերի և սրբազան շինությունների պահապանի դեր: Առասպելական այս թռչունները՝ գրիֆոնները, պատկերացվել են կես թռչուն - կես մարդ տեսքով: Հին աշխարհի երկրներում նրանք համարվել են Արևի և նրան անձնավորող աստվածների խորհրդանիշներ<sup>25</sup>: Այս առումով ուշագրավ է Կարմիր բլուրից հայտնաբերված զարդատուփի կափարիչի վրայի պատկերը՝ կենաց ծառ և Արևի խորհրդանշան, աջ և ձախ կողմերում՝ գրիֆոններ, որոնք խորհրդանշել են Արուսյակ մոլորակն իր երկու դրսևորումներով՝ Լուսաբեր և Գիշերավար<sup>26</sup>: Ենթադրվում է, որ «Անգղների պաշտամունքի հետ կապի մեջ է նաև հին հայոց առասպել-

21 Տե՛ս Աստ. Խաչատրյան, նշվ.աշխ., էջ 40-61:

22 Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությանը Գ.Վ.Աբգարյանի, Եր., 1979, էջ 51: Ս.Ադոնցը գրում է. «Հին հայերը իրաւամբ կարծում էին, որ Անգեղ աստուծոյ անուն է եւ նոյն այն Անգեղի հետ, որ յիշուում է Ս.գրքի հայ թարգմանութեան մէջ, իբր համագոր բնագրի ներգալ-ին: Մար-Աբասեան պատմութեան անանուն հեղինակն եւս գիտէ, որ Անգեղն աստուածութիւն է»: Տե՛ս Ն.Ադոնց, նշվ.աշխ., էջ 392: Նշենք նաև, որ «Գարգաշայանը (ՔՄն. պատմ. Ա, էջ 250) և Խալաթյանցը (Յոսոս, 327) ցոյց են տվել, որ Ս. գրքում մի տեղ բնագրի Ներգալ աստծու դեմ հայերեն թարգմանությունն ունի Անգեղ (Դ Թագ. Ժ 30). սրանից նրանք եզրակացնում են, որ Անգեղը եղել է մի աստվածություն: Այս ենթադրությունը ուժ է ստանում և Սեբեոսի վկայությամբ...»: Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 345-346, ծան. 127): Ս. Աբեղյանը Տորք Անգեղի մասին առասպելներում չի տեսնում Ներգալ աստծուն հատուկ գծեր՝ բացի ուժից ու թշնամիների դեմ կռվելու մի դեպքից և գտնում է, որ միայն Աստվածաշնչի թարգմանությամբ չի կարելի Ներգալի հատկությունները վերագրել Տորք Անգեղին: Տե՛ս Մ.Աբեղյան, նշվ.աշխ., էջ 59: Հին Բաբելոնում պաշտվող գլխավոր աստվածություններից մեկը եղել է Ներգալը՝ պատերազմի, հիվանդությունների և մահվան աստվածը: Տե՛ս История древнего мира, Древний Восток. Египет, Шумер, Вавилон, Западная Азия, Минск-Харвест, М. 1999, с. 367. Ժամանակին հայ թարգմանիչները նույնացրել են Տորք Անգեղին և Ներգալին՝ նրանց կերպարներում ընդհանուր գծեր տեսնելով: Ընդ որում, հավանական է, որ «Անգեղը նույնն է Ներգալի հետ եթե ոչ ստուգաբանորեն գեթ նշանակութեամբ: Անգեղ ամրոցն իր անունը պարտական է նոյնանուն աստուածութեան ... այնտեղ գտնուող տաճարի պատճառով»: Տե՛ս Ն.Ադոնց, նշվ.աշխ., էջ 392):

23 Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 412: Ըստ Աստ. Խաչատրյանի՝ բնագրում Բագարան է և ոչ թե Բագարատ: Տե՛ս Աստ. Խաչատրյան, նշվ.աշխ., էջ 53:

24 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1979, հ.1, էջ 127:

25 Տե՛ս Ս.Պետրոսյան, Հայոց մեհենագրերի ակունքներում, Գյումրի, 2008, էջ 86-88:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 86-87:

լաբանության ուշագրավ կերպարներից մեկը՝ Տորքը, որը կրում էր **Անգեղեայ** մակդիրը»<sup>27</sup>:

Հետագոտողների կողմից հայկական **անգղի** հետ համեմատվել են սկյութ. *αγλν* (կարապ), արաբ. *α`նգα* (փյունիկ հավք) և լազական *ահкэ* (անգղի գույնի թռչնի տեսակ) բառերը<sup>28</sup>:

Այս կապակցությամբ նշենք, որ **Անգեղ** դիցանվան և **անգղ** թռչնանվան կապը վիճահարույց է<sup>29</sup>: Այն ներկայացվել է նաև որպես կարապի տեսքով աստվածություն, որը հետագայում դարձել է աստվածների բանբերը<sup>30</sup>: Սակայն այս պնդումը ևս հիմնավորման անհրաժեշտություն է գգում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **Անգեղ տունը** եղել է Բագրատունիների տիրույթ և այդ տոհմի պաշտամունքային կենտրոն<sup>31</sup>: Բագրատունիների նախահայր, այդ տոհմի պաշտպան ու հովանավոր **Տորք** աստծուն երկրպագել են նաև Բագրատունիների մյուս տիրույթներում<sup>32</sup>:

IX-XI դդ. ձևավորված բյուզանդական «Դիգենիա Ակրիտաս» էպոսում հիշատակվող **Հերակլեսի երկիր** աշխարհագրական անվանումը համարվում է հայերեն Անգեղտան ճշգրիտ թարգմանությունը<sup>33</sup>: Հանրահայտ է, որ հելլենիստական ժամանակաշրջանի Հայաստանում **Հերակլեսի** հետ մույնացվել է **Վահագն** աստվածը: Նրա պաշտամունքի նշանավոր կենտրոնը գտնվել է Տարոն գավառի **Աշտիշատ** գյուղում<sup>34</sup>: Ուստի, թեև հիմքեր կան **Տորք Անգեղին** համադրելու **Հերակլեսի** հետ<sup>35</sup>, սակայն ավելի հավանական է, որ **Հերակլեսի երկիրը** տարածականորեն համապատասխանում է **Տարոն** գավառին:

Ըստ նոր մոտեցման՝ **Տորքի պաշտամունքը Անգեղ տուն** գավառում «միահյուսվելով **Անգեղ** անունով բուն հայկական աստծու պաշտամունքին, կոչվել է **Տորք Անգեղեայ**»<sup>36</sup>: Այս կարծիքին համահունչ է այն միտքը, որ Տորք Անգեղը եղել է «հայոց հնագույն նախարարական Անգեղ տան հերոս-նախնու այլաբանական արտացոլումը, որը դիցաբանական հնագույն շերտում հանդես է եկել երկու՝ Տորք

27 Ս. Պետրոսյան, նույն տեղում, էջ 88:

28 Տե՛ս Դ.Աճառյան, Գայերեն արձատական բառարան, հ. I, Ե., 1971, էջ 184:

29 Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 412:

30 Տե՛ս Դ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 184:

31 Տե՛ս Н.Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 413, Վ.Վարդանյան, Բագրատունիների տոհմի ծագմանը և գործառնություններին առնչվող մի քանի հարցերի շուրջ, ՊԲՀ, 2008, N 1, էջ 250:

32 Տե՛ս Վ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 253:

33 Տե՛ս Р.М.Бартияян, О некоторых вопросах византийского эпоса о Дигенесе Акрите. Տե՛ս Դ. Մ.Բարթիկյան, Գայ-բյուզանդական հետագոտություններ, հ. II, Եր., 2002, էջ 141:

34 Ըստ հայոց ավանդական պատմության՝ «Եւ գտեալ յԱսիայ պղնձածոյլ ոսկեօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՅերակլեայ և զՎարդոնի տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Ջոր առեալ քրմապետանցն, որ էին յազգէն Վահունեաց՝ զՎարդոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր, իսկ զՅերակլեայն գառնապատկերն, որ արարեալ էր ի Սկիւդեայ և ի Դիպինոսէ կրտսացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի կանգնեցին ի Տարոն, իւրեանց սեպիական գիւղն յԱշտիշատ, յետ մահուան Արտաշիսի»: Տե՛ս Մովսէս Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 122): Սեկ այլ տեղեկության համաձայն՝ «Որում հաւանեալ Տիգրան, կանգնեաց զՈղիմպիական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիլ, և զԱրտեմիդայն զմիս պատկերն յերիզայ, և զԵփեստունն ի Բագայառիցը: Բայց զՎիրողիտեայ զպատկերն, իբրև Յերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Յերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն: Եւ ցատուցեալ ընդ Վահունիսն, եթէ ընդդ յիւրեանց սեպիականին իշխեցին կանգնել զպատկերն Յերակլի, գառաքեալն ի նորին հօրէ՝ ընկննու գնոսա ի քրմութենէն, և զգիւղն յարքունիս առնու, յորում պատկերքն կանգնեցան»: Տե՛ս նույն տեղում, էջ 128:

35 Սկստե՛ք, որ Տարոնում նույնպես պաշտել են Տորքին: Տե՛ս Ս.Չարությունյան, Գայ առասպելաբանությունը, Բեյրութ, 2000, էջ 96-97, 100-101:

36 Վ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 253: Առավել մանրամասն տես Ս.Չարությունյան, նշվ. աշխ., էջ 101:

և Անգեղ պաշտամունքների տեսքով»<sup>37</sup>: Սակայն հարցի ուսումնասիրությունը կարող է տանել նոր զուգահեռների:

Այս տեսանկյունից ուշադրության են արժանի սլավոնական լեզուներում եղած փաստական տվյալները: Նկատենք, որ ուկրաիներեն *вродливый* բառը (արտասանվում է *вродлы'вый*) նշանակում է **գեղեցիկ**, իսկ նրան համահունչ ռուսերեն *уродливый* բառը ունի հակառակ նշանակությունը<sup>38</sup>: Չեխերենում և լեհերենում *uroda* բառն արտահայտում է **գեղեցկություն, գեղեցկուհի, գեղեցիկ** իմաստները<sup>39</sup>: Հետևաբար Տորքի **Անգեղեայ** հորջորջումը նույնպես կարող էր ունենալ դրական նշանակություն և արտացոլել **գեղեցիկ** իմաստը: Նշենք նաև, որ աստվածների անունները կարող են անցնել իրենց աչքի ընկնող հատկանիշի վրա, ինչպես, օրինակ, Tarku փոքրասիական անունը լիկիացիների մոտ դարձել է ընդհանրապես **աստված**, իսկ խեթերի մոտ *tarkua`* առաջացնելով **բարկանալ, կատաղել, պարել**<sup>40</sup> ըմբռնումները: Հայերենում Արևի **գեղեցիկ** անվանումը կապված է նախ և առաջ լույսի մասին պատկերացման հետ<sup>41</sup>: Հետևաբար պետք է կարծել, որ **Անգեղեայ**-ն ունեցել է **երկնային ճրագ, կանթեղ, լույս (հիմքում՝ Արև)** նշանակությունը: Այդ մասին է վկայում նաև *andrew* տերմինի *an* բաղադրիչի, ինչպես նաև **գեղ** բառարմատի ստուգաբանությունը<sup>42</sup>: Ալնհայտ է նաև, որ **Տորք** կամ **Տուրք** անվանաձևերը և նրանց փոքրասիական զուգահեռները ծագում են հնդեվրոպական **Արևի** աստված *Tor* (*Tur* կամ *Sur*) դիցանունից<sup>43</sup>: Միևնույն ժամանակ, **Տորք** անվան ընկալումն իբրև աստված բերում է այն համոզման, որ **Տորք Անգեղեայ**-ն իր կազմությամբ նշանակել է **Երկնային լույսի աստված**: Տվյալ դեպքում **Տորք Անգեղեայ** (= **Արա Գեղեցիկ**) իմաստաբանական փոխանցումն ակնհայտ է: Թվում է՝ «...հնարավոր է և վարկածային մեկ այլ տարբերակ հաշվի առնելով գլխավոր աստվածության անվան իմաստը որպես **ամպրոպի, տեղատարափի, անձրևի** աստված»<sup>44</sup>:

Այսպիսով, **Տորք Անգեղեայ-ն ներկայանում է որպես երկնային լույսի՝ տիրող, պարզևող, բաշխող և շնորհող**, միևնույն ժամանակ՝ արիեստների, երկրագործության հովանավոր, **պտղաբերության** աստված, որը բարձրաբանդակում պատկերված է ձեռքին ողկույզներ ու հասկեր բռնած<sup>45</sup>: Նա նաև ամենակարող, ուժ և զորություն ունեցող, թշնամիներին մշտապես հաղթող<sup>46</sup>, կատաղի, ամպրոպի և

37 **Պ.Բարսեղյան**, Վաղ հավատալիքներն ու դիցաբանությունը Հայաստանում, ՓԳԹ գիտական աստիճան հայցելու ատենախոսության սեղմագիր, Եր., 2008, Ե., էջ 18-19:

38 Տե՛ս [ru.wikipedia.org/wiki/ Ложные – друзья - переводчика](http://ru.wikipedia.org/wiki/Ложные_друзья_-_переводчика)

39 Տե՛ս [www.slawanthro.mybb3. ru / viewto pic. php. ?t= 6857.](http://www.slawanthro.mybb3.ru/viewto.pic.php.?t=6857)

40 Տե՛ս **Գ.Ա.Ղափանցյան**, *Նշվ.աշխ.*, էջ 119-120:

41 Տե՛ս **Ա.Ղարագոյզյան**, Գեղամա երկիրն աշխարհագրական անվանումներում, «ՊԲՀ», 2004, 3,

42 Նույն տեղում, էջ 215: Ըստ **Գր.Ղափանցյանի**՝ «Հ.-ե. *an* նախածանցը նախագրաբարյան հնագույն շրջանում եղել է կենդանի գործածական ու գիտակցելի և դրվելով գոյականի վրա՝ նշանակել է «վրա, վրայով, համար», իսկ բայերի պարագայում «դեպի այն կողմը, տակը, վրան»: Տե՛ս **Գր.Ղափանցյան**, Հնեաբանական մի քանի մնացորդներ հայերենում, Եր., 1927, էջ 7: Նշենք նաև, որ հնդեվրոպական *an* նախածանցի նշանակությունը մեկնաբանվել է նաև այլ կերպ. «ան աստված (Օմիլիան և թերևս Անբերդ բառերի մեջ»: Տե՛ս **Գ.Ա. Ղափանցյան**, *Նշվ. աշխ.* էջ 145:

43 Ուշագրավ է, որ դիցանունն իր արտացոլումն է գտել նաև Տուշպա (*Tošpa/\*Toršpa*, *աքքաղ. Turšpa/ կամ Tušpa*) քաղաքանվան մեջ: Տե՛ս **Վ.Համբարձումյան**, Հայերեն Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Եր., 2002, էջ 25): Հետևաբար, վաղնջական ժամանակներում Տուշպա-Վանում ևս պաշտում էին Տորքին:

44 **Э. Петросян**, *указ. соч.*, с. 93.

45 Տե՛ս **Աստ. Խաչատրյան**, *Նշվ. աշխ.*, էջ 46:

46 **Г.Вардумян**, *Дохристианские культы армян. Տե՛ս «Հայ ազգագրություն և բանահյուսություն»*, 18, Եր., 1991, էջ 100-101:

տեղատարափի, շանթարձակ աստվածություն էր<sup>47</sup>:

## Summary

### TORK ANGEGHYA: ETYMOLOGICAL REVIEW

Armen H. Gharagyozyan

There have been many conflicting and contradictory points of view in academic literature regarding one of the most remarkable characters in Armenian mythology, Tork Angegh (about the deprecatory nature of the Turkish ethnic name of Tork/Turk). This study shows that the depiction of Tork Angeghya (Angegh – Ugly) had a positive function and reflected the meaning of beauty. It is noteworthy that in Armenian, the Sun's beautiful name is connected first and foremost with the notion of light. Thereby, Angeghya-Ugly meant heavenly lamp, lantern, light (at the foundation, Sun). It is obvious that the names Tork and Turk and their Asian parallels originated from the Indoeuropean sun god Tor's (Tur or Dur) mythological name. At the same time, the perception of Tork/Turk as a god brings one to the conclusion that Tork the Ugly, in his composition meant the god of heavenly light. In this case, the semantic transfer of Tork the Ugly = Ara the Beautiful is obvious.

In this way, Tork the Ugly is presented as a heavenly light dominator, giver, distributor, grantor; at the same time the patron of crafts and tillers and the god of fertility. He was also the most-abled, the bearer of power and strength, always the winner, fierce, the diety of lightening and thunder.

---

47 Ավելի մանրամասն տե՛ս Վ.Վարդանյան, Գշվ.աշխ., էջ 252: